

ՆԻԿՈԼԱՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆՈՐ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՍԵՊԱԳՐԵՐՈՒՄ

1. eia ardiše, քն՞ eiardiše

Ուրարտերեն eia բառը Մ. Սալվինին նախկինում ընթերցել է որպես մի ամբողջություն.

manini ^dHaldi bedini ^dHaldinani KÁ bedini ^mIšpuinie ^mMenua ulguše
manini ^mIšpuini ^mMenua alsuiši eia ardiši¹

Իսկ հետագայում, հաշվի առնելով Ի.Մ. Դյակոնովի այդ առթիվ արված առարկությունը², eia-ն նա դիտարկել է որպես ardiše բառի բաղկացուցիչ մաս՝ eiardiše.

^dHaldi bedini ^dHaldinani KÁ bidini manini ulguše pisuše alsuiše eiardiše
arni usmaše³

Ի դեպ հատկանշական է, որ eiardiše ընթերցման հավաստիության վերաբերյալ Ի.Մ. Դյակոնովի կողմից ստորև բերված մեկնաբանությունը, կարծում ենք, հարկ եղած չափով արդարացում չի գտնում ուրարտական իդենտիկ տեքստերում: Տվյալ դեպքում նա նկատի ունի Կարմիրբլուրի KՄԿԽ, 424, տողեր 4-5 արձանագրության ^dHaldina ^mKÁ bidi manini ulguše pisuše alsuiše eia ardiše arni usmaše տեքստը, որի հիման վրա սակավ հավանական է համարում eia շաղկապի հիշատակությունը նախադասության երեք անդամների թվարկումից հետո, ըստ որում վերջինից շատ ավելի առաջ:

Սակայն այստեղ Ի.Մ. Դյակոնովը անտեսում է, որ նույնը չի կարելի ասել, օրինակ, Արգիշտի II-ի Չելեբի-բադիի KՄԿԽ, 406 արձանագրության երեսի կողմի 8-12 տողերի տեքստի մասին, ուր առկա է aruše ekuše(?) ispuiše ulguše pisuše alsuiše eia ardiše arni usmaše: Հետևաբար, ակնստու է, որ այստեղ eia շաղկապը արդեն հիշատակվում է նախադասության ոչ թե երեք, այլ վեց անդամների թվարկումից հետո: Այդ դեպքում, ըստ երևույթին, հավանական է, որ այստեղ eia-ն հանդես է գալիս ոչ թե «ե», այլ իդենտիկ «նաև», «ինչպես նաև» իմաստներով⁴: Մյուս կող-

միջ կապծում ենք, որ այս մեկնաբանությունը նույնքան հավանական է թվում վերոհիշյալ KYKH, 424 արձանագրության խղենտիկ տեքստի համար:

Դեռ ավելին, մնան կարգի կասկածներ *eia* շաղկապի հավաստիության վերաբերյալ այլևս չեն ծագում Մենուայի Շաշանցում հայտնաբերված KYKH, 141 երկեզվյան արձանագրության ուրարտական տեքստում, ուր մեզ հետաքրքրող *eia* շաղկապով շարահյուսվում են ընդամենը երկու բառ՝ *alsuisi*-ն և *ardisi*-ն՝ *alsuisi eia ardiši*⁷: Ըստ որում հաշվի առնելով *eia* շաղկապի մեզ հայտնի մյուս տարբերակները, ինքնին հարց է ծագում, թե արդյո՞ք այն նույնական չէ *eai*-ի հետ, եթե տվյալ դեպքում ենթադրենք դրափոխության առկայության *eia-eai*:

Եվ, վերջապես, սրանց հետ մենք հակված ենք ինչ-որ ընդհանրություն տեսնելու մասն առնել վերջերս Ռուսա II-ի Այանիսի նոր արձանագրության շնորհիվ գիտական շրջանառության մեջ դրված *ai* շաղկապը, որը նույն ձևով հանդիպում է մասն խուրբիերենում և մեկնաբանվում «եթե», «կամ» իմաստով⁸: Ի դեպ ըստ ամենայնի ակնառու է, որ Ռուսա II-ի Չվարթնոցի արձանագրության անեծքի բանաձևի *eai* շաղկապին նույն բազավորի Այանիսի իլենտիկ արձանագրության անեծքի բանաձևում փոխարինում է *ai*-ն: Միայն այդ տեքստերը.

... *aluše ulise tiulie ieše zadubi ... eai* ^{KUR}*biainiše eai* ^{KUR}*luluiniše* ^d*Haldiše* ^d*IM-se* ^d*UTU-ni-se* ^{DINGIR}^{MEŠ}*-se mei tini mei armuzi mei zilbi qiuraidi kulietuni* (KYKH, 421, տողեր 37-47):

... *aluše tiulie ieše zadubi ai* ^{KUR}*biainiše ai* ^{KUR}*luluiniše ...* ^d*Haldiše* ^d*IM-se* ^d*UTU-ni-se* ^{DINGIR}^{MEŠ}*-se mani tini armuzi ...* ^d*UTU-ni piei ... auie ululie* (Ayanis I, էջ 258, սեկցիա VIII, տողեր 6-11):

Ի դեպ բոլորովին էլ պատահական չէ, որ տվյալ դեպքում մեզ հետաքրքրող *eia*-յի տարբերակները՝ *e'a-eua*-ն, *eue*-ն և *eai*-ը որպես շաղկապ հիշատակվում են մասն ուրարտական մի շարք այլ արձանագրություններում: Միայն դրանք.

1. ... *ini Ê* ^m*Menuaše* ^m*İspuinihiniše* *šidistuni badusie e'a Ê.GAL šidistuni* (KYKH, 83, տողեր 2-5):

2. ^m*Menuaše* ^m*İspuinihiniše ini pulusi kuguni e'a* ^d*Haldinili KÁ sidistuali* (KYKH, 101, երեսի կողմ, տողեր 2-6):

3. ^m*Argistiše ali aluše tinini tuli eai ini DUB-te pitulie* (KYKH, 409, տողեր 13-15):

4. ^d*Haldiše EN-se hututuhi gunuše eue ipsuše šuini...* (KYKH, 406, երեսի կողմ, տողեր 31-34):

5. ... ^d*Haldiše eue DINGIR^{MEŠ}*-aše parie esini telani* (KYKH, 478, տողեր 8-10):*

6. ... ini susie ^mRusaše ^mArgistihinise šidistuni eue ^dHaldinili KÁ badusie ^mRusašina ^šaiduru-kai kušuni (Ayanis I, էջ 254, սեկցիա I, տողեր 1-2):

7. ^lušiani inukie E.GAL-a eue URU^{MES} alili inukie E.GAL-a zadubi (Ayanis I, էջ 258, սեկցիա VIII, տողեր 1-2):

8. ^mRusaše ^mArgištihinise ali ^dHaldis-me ushanuni hušutuhi gunuse eue ipšuse (Ayanis I, էջ 258, սեկցիա VII, տողեր 5-6):

Մյուս կողմից, eia ardise (բայց ոչ ejardise) ընթերցման հավաստիությունը հստակ վկայում է ուրարտական արձանագրություններում հիշյալ ինքնուրույն բառերի աներկբա առկայության փաստը: Ըստ որում նրանցից eia-ն մեկնաբանվում է «և», «մսև», «ինչպես մսև», իսկ ardise-ն՝ «ուժ», «իշխանություն», «կարգադրություն» իմաստներով: Ինչ վերաբերում է ejardiše վիճելի ընթերցմանը, ապա անհնար է նրա օգտին կռահել որևէ փոքրիշատե համոզիչ իմաստավորում: Հետևաբար, պատահական չէ, որ eia ardise ընթերցումը միահամուտ ընդունում են ուրարտական արձանագրությունների դիվանների հեղինակներ Գ.Ա. Մելիքիշվիլին⁷, Ֆ.Վ. Բյոնիզը⁸, Ն.Վ. Հարությունյանը⁹ և այլոք:

2. amanigidi, քե՞ amani igidi

Այանիսի նորահայտ արձանագրության մեջ Մ. Սալվինին amanigidi-ի փոխարեն առաջարկում է amani igidi ընթերցումը¹⁰:

Նախ նշենք, որ amani բառ իրոք հայտնի է գիտությանը, այնինչ կարծեցյալ igidi-ն, հասկանալի պատճառներով, չի հանդիպում ուրարտական սեպագիր աղբյուրներում: Ինչ վերաբերում է վաղուց առաջարկված amanigidi ընթերցմանը¹¹, ապա առկա նյութի հոգատար քննարկման դեպքում, կարծում ենք, հազիվ թե կարող է կասկած հարուցել, որ դա պարզապես amani բառն է՝ մատուցված ուղևորական -gi(e)di (տարբերակ՝ i(e)di) հոլովաձևով: Հմմտ. ^{(URU)U}dudi և ^{(URU)U}dudigiedi (KYKH, 520, երեսի կողմ, տող 11), ^{KUR}ebani և ^{KUR}ebanigidi (KYKH, 241A, տող 5), ^{KUR}Uelikuni և ^{KUR}Uelikunigidi (KYKH, 241F, տող 7), ^{KUR}Isteluerani և ^{KUR}Isteluanigidi (KYKH, 241F, տող 14) և այլն:

Ի դեպ, կարծում ենք, որ սեպագիր աղբյուրների վաղուց հայտնի սույն a-ma-ni-i-gi-di գրության մեջ Մ. Սալվինին, ըստ երևույթին, թյուրիմացության մեջ է գցել տոսկ գրաֆիկ նշանակություն ունեցող հավելյալ i-ի առկայությունը amani-ից հետո՝ առձանագրության տվյալ տողի ազատ մնացած հատվածը զբաղեցնելու համար:

Մյուս կողմից հատկանշական է, որ tar-gi-i-ni-li բառի դեպքում ես, այդ նույն միտումով, Այանիսի նորահայտ մի արձանագրության հրատարակության ժամանակ¹² Մ. Սալվինին ի սկզբանե շփոթեցրել է targi-

յից հետո առկա հավելյալ i-ն, որի պատճառով targinili բառը (amani igidi նման) նա արհեստականորեն տրոհել է targi և inili բաղադրիչների (հմմտ., սակայն, այդ բառի targini և targinili եզակի և հոգնակի գրությունները):

Նշենք նաև, որ հետագայում Այանիսի հիշյալ արձանագրության վերահրատարակության պահին իր նախկին targi inili-ն Մ. Սալվինին արդեն մատուցել է targinili ձևով: Ի դեպ որպես այդ «նոր» ընթերցման փաստարկ ծանոթագրության մեջ նա մատնացույց է արել, որ սեպագիր տեքստում targinili arnusiinili բառակապակցության մեջ targinili որոշիչը հոգնակի թվով համաձայնեցված է arnusiinili որոշյալին¹³: Այնուհետև, որոշ ուշացումով, Ռուսա III-ի Գյովելեքի նոր արձանագրության հրատարակության առիթով Մ. Սալվինին նաև հղում է արել այն մասին, որ Այանիսի նոր արձանագրության targinili-ն համոզիսանում է ուրարտական այլ արձանագրությունների DAN.NU^{MI.S} շումերական գաղափարագրի համապատասխանությունը¹⁴:

Այստեղ մեզ մնում է սուկ ավելացնել, որ targinili նոր ընթերցումը և այն հաստատող վերոհիշյալ երկու փաստարկները Մ. Սալվինին, առանց որևէ հղում անելու, տառացիորեն ընդօրինակել է տալերիս հեղինակի ուրարտական արձանագրությունների նոր դիվանի՝ KVKH, 412b տեքստից և նրան հղված 5-րդ ծանոթագրությունից: Ինչ վերաբերում է հիշյալ փաստերի, այսպես կոչված, սեփականաշնորհման մատուցմանը տարբեր ժամանակներում և տարանջատված եղանակով, ապա դժվար չէ կոսահել, որ այն միտում ունի քյուրիմացության մեջ զգելու սակավատեղյակ ընթերցողին: Ի դեպ ելնելով հիշյալ, այդօրինակ մի շարք այլ ակնառու փաստերից, բացառված չէ, որ amanigidi նոր ընթերցումը ևս - հետագայում աննկատ ունենա սեփականաշնորհման մույն ճակատագիրը:

Փաստական մյուսը առավել տեսանելի և փաստարկները համոզիչ դարձնելու նպատակով այժմ ստորև հատվածաբար բերում ենք amani և amanigidi ընթերցումները հիշատակող ուրարտական տեքստերը.

1. ... aluki amani suga bari ... ali tase amani bidi ... ¹⁵urbikaše masani tisni amani ... (KVKH, 193, տողեր 6-7,9-10):

2. ... aluki amani <suga bari ... (KVKH, 194, տող 6):

3. ase ... ^dHaldini amanigidi iphie ^dHaldini <badusini iu urzie> 'ahulini KITM-a quldinini mei esimesi elmuše <manunie> (KVKH, 415, տողեր 8, 10-11):

4. ase ... ^dHaldini amanigidi iphie ^dHaldini badusini iu urzie 'ahulini qiura quldinini mei esimesi elmuše manuni (Ayanis I, էջ 257, սեկցիա IV, տողեր 7-9):

Ի դեպ ուրարտերեն *amanai* բառը մասնագիտական գրականության մեջ առաջարկվել է նույնացնել հայերեն «աման»-ի¹⁵ (ափսե) հետ: Այս բառը սովորաբար հիշատակվում է ուրարտական պաշտամունքային տեքստերում կենդանիների զոհաբերությունների ժամանակ և KYKH, 193 արձանագրության մեջ համդես է գալիս մերթ որպես «ընծայի ւսման» (*tase amani*), մերթ էլ զոհաբերված կենդանու «սրտի ւսման» (*tišni amani*), իսկ Արծկեի եւ Այամիսի արձանագրություններում որպես «խալ-դի աստծո ւսման» (*Ḫaldini amani*):

3. *egudi badi*, թե՞ *gudi GÜB(?)*-di կամ *gudinadi*

Խնդրո առարկա սեպագիր տեքստերի ընթերցումներում և մեկնաբանություններում ուրարտագիտության մեջ տեղ են գտել զգալի տարակարծություններ:

Գ.Ա. Մելիքիշվիլու մոտ, օրինակ, այդ առթիվ հանդիպում է հետևյալ ընթերցումը.

... a-lu-še ha-lu-li-e gu-di GÜB-di a-tu-li-i-e (BDM, 1953, № 2, էջ 295, № 96, տող 3. նույնի YKH, 96, տող 3):

Ֆ.Վ. Քյոնիգը փաստորեն առաջարկում է նույն ընթերցումը, սակայն GÜB զաղափարագրի հավաստիությանը վերաբերում է կասկածամտորեն.

... a-lu-še ha-lu-li-e gu-di GÜB(?) -di a-tu-li-i-e (HchI, հատոր II, 76, III):

Ի դեպ *gu-di GÜB(?)*-di ընթերցումը ընդունում է մահ Ի.Ս. Դյակոնովը՝ միաժամանակ առաջարկելով դրա թարգմանությունը. «դեպի աջ (և) դեպի ձախ», «աջից և ձախից», բառացի՝ «աջին (և) ձախին» (YΠΔ, էջ 48):

Իսկ Ն.Վ. Հարությունյանի մոտ Գ.Ա. Մելիքիշվիլու, Ֆ.Վ. Քյոնիգի և Ի.Ս. Դյակոնովի *halulie gudi*-ի փոխարեն առաջարկված է *haluli egudi* ընթերցումը (KYKH, 122, տող 3):

Եվ, վերջապես, խղճտիկ տեքստերի մեզ հետաքրքրող բառերի ընթերցումներում շատ ավելի մեծ տարակարծություններ ունի Ս. Սալվինին: Ի դեպ բացի մնացած կարևոր հանգամանքներից, որոնք կարծարծվեն ստորև, նրա մոտ վերոհիշյալ *egudi* (կամ՝ *gudi*) GÜB(?) -di երկու բառերի փոխարեն առաջարկված է ընդամենը մեկ բառ՝ *gudinadi*.

³⁾ ... ^mRu-sa-a-še a-li me-i a-i-še-i ha-lu-li-e gu-di-na-di KÜ-ni ... (Ayanis I, էջ 257, IV սեկցիա, տող 10):

^{μ)} ... ^dHal-di-na-a KÁ i-še-er-hi-ni ha-lu-li u-i-la-ti-ni a-lu-še-e gu-di-na-di a-tu-li-e... (Ayanis I, էջ 258, V սեկցիա, տողեր 10-11):

Իսկ այժմ անդրադառնալով վերոհիշյալ ընթերցումների հավաստիությանը, կարծում ենք, անհրաժեշտություն է ծագում պարզելու երկու

խնդիր. ա) հա-lu-li e-gu-di, թե՞ հա-lu-li-e gu-di և բ) gu-di (կամ՝ e-gu-di), GÜB(?) -di, gu-di-na-di, թե՞ բոլորովին այլ եզրահանգում:

Առաջարկված խնդիրներից առաջինում, համոզված ենք, որ նախապատվությունը պետք է տալ հա-lu-li e-gu-di ընթերցմանը, քանի որ ոչ մի հինք չկա egudi-ի սկզբի e-ն վերագրելու հալսի-ին և aluše-ին՝ իբր նրանց վերջավորություն: Այդ հարցի լուծման վրա հարկ եղած չափով լույս են սփռում հալսի ašhulini (KYKH, 82, տող 27), ašaštuli հալսի (KYKH, 122, տող 2) և հալսի uilalini (Ayanis I, էջ 258, V սեկցիա, տող 11) տեքստերը: Եւ չենք ասում ուրապտերեն Իալսի-ի և հայերեն «խաղող»-ի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առաջարկված համոզիչ ստուգաբանությունը¹⁶:

Ինչ վերաբերում է հա-lu-li-e միակ գրության առկայությանը Այանիսի արձանագրության ... [kam]-ni-ni ^{G15}GESTIN հա-lu-li-e kam-ni-ni Է-i za-na-ni-ni հատվածում (Ayanis I, էջ 258, V սեկցիա, տող 9), ապա այնտեղ հա-lu-li-e բառի վերջին e-ն, Է-i գաղափարագրի -i հնչյունական լրացման մասն, ակներևաբար հղովական վերջավորություն է (սեռականի կամ տրականի): Իսկ ցիտված տեքստի Է-i za-na-ni-ni փոխարեն Մ. Սալվինի առաջարկած Է i-za-na-ni-ni ընթերցումն էլ հիմնովին հերքվում է KYKH, 122 արձանագրության 5-րդ տողում za-na-ni-ni բառի աներկբա գրության առկայությամբ:

Անդրադառնալով կրկին GÜB(?) -di ընթերցմանը, ապա ինչպես սուկ վերջերս մեզ հաջողվեց բացահայտել, ուղարտական գրագրի մեղքով և վանկազիյո նշանի խեղաթյուրման պատճառով առայժմ այն մնացել է ուղարտական սեպագիր տեքստերի ընթերցման պրոբլեմատիկ խնդիրների շարքում: Ի դեպ մեր անվստահությունը KYKH, 122 արձանագրության GÜB(?) -di ընթերցման նկատմամբ ծայր աստիճանի սրվեց հատկապես այն դեպքում, երբ նկատեցինք, որ Այանիսի նորահայտ ծավալուն արձանագրության իդենտիկ հատվածներում կարծեցյալ GÜB(?) -di-ի փոխարեն կրկնակի ւոկա է ba-di կամ ba-a-di գրությունները (Ayanis I, էջ 258, սեկցիա IV, տող 10, սեկցիա V, տող 11): Ուստի այդ ակնառու փաստերն էլ, բնականաբար, մեզ ստիպեցին կրկին, ամենայն հոգատարությամբ, զննելու KYKH, 122 արձանագրության առեղծվածը: Եվ անմիջապես բացահայտվեց, որ այնտեղ ևս փաստորեն առկա է միևնույն ba-di բառը՝ պարզապես և նշանի անգոյշորեն մասնակի խեղաթյուրմամբ ուղարտական գրագրի անփութության հետևանքով:

Ընթերցողին համոզելու համար նշենք, որ, ինչպես հայտնի է, և նշանը բաղկացած է մեկ հորիզոնական, երկու «անկյունաձև» և մեկ ուղղահայաց հաջորդական սեպերից (տես Borger, ABZ, № 5): Հենց այդպես էլ իրոք փորագրված է կարծեցյալ GÜB-ի տեղում KYKH, 122 արձանագրության 3-րդ տողում: Սակայն մի պահ կարծելով, թե և նշանի փորագ-

ըությունը տեքստում դեռևս չի ավարտվել, ապա այդ նշանի վերջին «անկյունաձև» և ուղղահայաց սեպերը թյուրիմացաբար զրազվիրը վերստին կրկնել է տեքստում: Հենց դրանից էլ ծագել է ողջ թյուրիմացությունը:

Եվ, այնուամենայնիվ, այդ ամենով հանդերձ վերը նկարագրված կարծեցյալ GÜB(?) սեպախումբը ամենևին չի համընկնում իրական GÜB գաղափարագրին (ասորեստանյան Ֆուժու-ին, որ նշանակում է «ծախ կողմը») ոչ սեպագրերի դասավորությամբ, ոչ էլ «անկյունաձև» և ուղղահայաց սեպերի փոխհարաբերությամբ, այսինքն՝ KYKH, 122 արձանագրության կարծեցյալ GÜB(?) -ը մեկ հորիզոնականի հետ միասին պարունակում է երեք «անկյունաձև» և երկու ուղղահայաց՝ իրական GÜB-ի մեկ հորիզոնական, երկու «անկյունաձև» և երեք ուղղահայաց սեպերի փոխարեն (տես Borger, ABZ, № 88): Դեռ ավելին, այդ ըստ սմենայնի անհամոզիչ GÜB(?) գաղափարագրի «ծախ կողմը» թարգմանությունն էլ, բնականաբար, արդարացում չի գտնում մեզ հետաքրքրող սեպագիր տեքստում:

Ինչ վերաբերում է Մ. Սավինիի կողմից ba նշանի na ընթերցմանը Այանիսի նորահայտ արձանագրության մեջ ba-di բառում, ինչպես նաև ^{URU}Ba-si-e-hi-na-a քաղաքանվան մեջ (նրա ընթերցմամբ՝ ^{URU}Na-ši-e-hi-na-a. Ayanis I, էջ 258, սեկցիա IV, տող 11), ապա դրանք երկուսն էլ հավասարապես կատարյալ թյուրիմացության արգասիք են:

Հետևաբար, ճշգրտելով առեղծվածային GÜB(?) -di badi և gudinadi տարբեր պատճառներով խեղաթյուրված ընթերցումները, KYKH, 122 վաղեմի և Այանիսի նորահայտ արձանագրությունների մեզ հետաքրքրող իդենտիկ հատվածները ստանում են այսպիսի տեսք.

1. ... a-lu-še ha-lu-li e-[g]u-di ba-di a-tu-li-i-e ... (KYKH, 122, տող 3):

2. ... ^mRu-sa-a-še a-li me-i a-i-še-i ha-lu-li e-gu-di ba-di KÚ-ni ... (Ayanis I, էջ 257, սեկցիա IV, տող 10):

3. ... ^dHal-di-na-a KÁ i-še-er-hi-ni ha-lu-li u-i-la-ti-ni a-lu-še e-gu-di ba-di a-tu-li-e ... (Ayanis I, էջ 258, սեկցիա V, տողեր 54-55):

Կարծում ենք, որ այս տեքստերը ընդհանուր առմամբ հասկանալի են: Խոսքը վերաբերում է ուրարտական տաճարներում (^dHaldinili KÁ-li = šeštili) տեղի ունեցող պաշտամունքային արարողությունների ժամանակ զոհաբերված կենդանիների մարմնի զանազան մասերի (^{UZU}հսնս «միս», ^{UZU}նիճո «սիրտ», zieldi «լյարդ» և այլն) հետ միասին, մասնակիցներին մատուցվող նաև խաղողի (haluli) ճաշակման (KÚ-ni = atuli) մասին:

Ինչ վերաբերում է խաղողին հղված egudi և badi մակդիրներին (Haluli egudi badi), ապա նրանցից badi-ն, ըստ երևույթին, առնչվում է միևնույն bad- արմատից կազմված badusi «հոյակապ», «սքանչելի» բառի հետ, ո-

րը ուրարտական արձանագրություններում սովորաբար հիշատակվում է նորակառույց ամրոցների (E.GAL) և տաճարների (šestili) կապակցությամբ և մատնացույց է անում նրանց շինարարական կատարելության մասին: Հմմտ. badi-badusi ե ini-inusi, alae-alusi, urišhi-urišhushi խղենտիկ բառակազմությունները:

Հետևաբար, ելնելով վերոհիշյալ փաստական նյութից, մենք հակված ենք խորհելու, որ badi-ն, հավանաբար, վկայում է պաշտամունքային արարողությունների ժամանակ ճաշակվող խաղողի բարձր որակի, իսկ egudi-ն, գուցե, տեսակի մասին: Դրան պետք է ավելացնել տողերիս հեղինակի կողմից išerhini բառի վերաբերյալ վերջերս առաջարկված «այն ժամանակ» ստուգաբանությունը, որը փաստորեն համընկնում է խղենտիկ տեքստերի ikukani MU (sali)-ի («նույն տարում») հոմանիշը¹⁷:

NICOLAY HAROUTHIOUNYAN

NEW READINGS AND INTERPRETATIONS IN THE URARTIAN CUNEIFORMS

New reading of *eia ardiše* is suggested instead of the former *eiardiše*.

It is denied the reading of *amani igidi* and suggested *amanigidi*, which may be considered as Directive Case of the word *amani*.

On the basis of detailed analyses of the cuneiform texts it is denied the deformed readings of *gudi GÜB(?)*-di and *gu-di-na-di* and suggested a new interpretation in the form of *e-gu-di ba-di*.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. M. Salvini, Una «bilingue» assiro-urartea, «Studia Mediterranea, Piero Meriggi dicata», Pavia, 1979, էջ 578:
2. И.М. Дьяконов, ДВ, 5, չ 166. նույնի AMI, 22, էջ 97-98
3. M. Salvini, Ayanis I, Roma 2001, էջ 254, սեկցիա I, տողեր 6-7:
4. Այս մասին տես մանրամասն Н.В. Арутюнян, КУКН, 141, ծանոթ. 7:
5. Н.В. Арутюнян, КУКН, 141, ուրարտ. տեքստ, տող 3:
6. E. Laroche. Glossaire de la langue hourrite. RHA, XXXIV, Paris, 1976, չ 39:
7. Г.А. Меликишвили, УКН, 393.
8. F.W. König. Hehl, II, էջ 181:
9. Н.В. Арутюнян, КУКН, էջ 442:
10. M. Salvini, Ayanis I. Roma 2001, էջ 257, սեկցիա IV, տող 8, նույնի, SMEA, XLIII/2, Roma, 2001, էջ 286:
11. Ն.Վ. Հարությունյան, ՊԲՀ, 1962, թիվ 3, էջ 110: Н.В. Арутюнян, НУН, էջ 78, տող 10:
12. M. Salvini. SMEA, XXXV. Roma. 1995, էջ 111-124.

13. M. Salvini, Ayanis, I, Roma, 2001, էջ 251 և ծանոթ. 2:
14. M. Salvini, SMEA, XLIV/1, Roma, 2002, էջ 139:
15. Н.В. Арутюнян, КУКН, էջ 434:
16. J. Sanfalgian, ICU, Venise, 1900, էջ 370: Н.А. Мкртчян, ДВ, 4, էջ 27:
17. Այս մասին մանրամասն տես Ն.Վ. Հարությունյան, Նոր ընթերցումներ և մեկնաբանություններ Այանիսի նորահայտ ուրարտական սեպագրում, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և Ժողովուրդներ», XXI, Երևան, 2002, էջ 223-227.

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

- ՊԲՀ – Պատմա-բանասիրական հանդես (Երևան).
 ВДИ – Вестник древней истории (Москва).
 ДВ – Древний Восток (Ереван).
 КУКН – Н.В. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001.
 НУН – Н.В. Арутюнян, Новые урартские надписи Кармир-блур, Ереван, 1966.
 УКН – Г.А. Меликишвили, Урартские клинообразные надписи, Москва, 1960.
 УПД – И.М. Дьяконов, Урартские письма и документы, Москва-Ленинград, 1963.
 ABZ – Rykle Berger, Assyrisch-babylonische Zeichenliste, Neukirchen-Vluyn, 1978.
 AMI – Archaeologische Mitteilungen aus Iran (Berlin).
 Ayanis, I – A. Çilingiroğlu, M. Salvini, Ayanis, I, Roma, 2001.
 Hchl – F.W. König, Handbuch der chaldischen Inschriften, I-II, Graz, 1955-1957.
 ICU – J. Sanfalgian, Les inscriptions cunéiformes urartiques, Venise, 1900.
 RHA – Revue Hittite et Asiatique (Paris).
 SMEA – Studi Micenei ed Egeo-Anatolici (Roma).